

ՍՈՂՈՍՈՆՅԱԼ ՍՅՈՒԺԵՆԵՐԸ ՍՅՈՒՆԻՔԻ ԲԱՆԱՀՅՈՒՄԱԿԱԼ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Արևելյան ժողովուրդների հետ հայերի դարավոր շփումների ընթացքում բանավոր և գրավոր ճանապարհով փոխ են առնվել մի շարք պատմավիպական կերպարներ, որոնցից է նաև Սողոմոն Իմաստունը: Աստվածաշնչյան հայտնի հերոս Սողոմոն Իմաստունը մեծ ճանաչում է ունեցել, հայտնվել վիպական պատումների առանցքում, ձեռք բերել վիպական հերոսի հատկանիշներ և ընկալվել որպես բանահյուսական հերոս: Հոդվածում քննության է առնվել Սյունիքի տարածաշրջանում գրառված սողոմոնյան մի շարք սյուժեներ:

Բանալի բառեր` բանահյուսություն, պատմավիպական կերպար, արխաիկ սյուժե, ավանդություն, Սողոմոն Իմաստուն, Աստվածաշունչ, կախարդանք, հրաշագործություն, հավատալիք:

Սյունիքի բանահյուսական ժառանգության մեջ զգալի մաս կազմող պատմավիպական կերպարների մասին պատումների մի մասը տեղական ծագում ունի և անմիջականորեն հիմնված է Սյունիքի պատմական անցյալում տեղի ունեցած դրամատիկ անցքերի վրա, իսկ մի մասն էլ եկամուտ սյուժեներ են, որոնք տարբեր ժամանակներում և տարբեր ճանապարհներով մուտք են գործել տեղացի բանասացների երկացանկ և, ըստ անհրաժեշտության, շրջանառվել: Սյունիքի բանահյուսական ժառանգության զննությունը թույլ է տալիս ասելու, որ տեղական պատմավիպական կերպարներին զուգահեռ, երբեմն նույնիսկ առավել լայն չափերով բանահյուսական ավանդույթում կենցաղավարել, պատմվել և դարերով փոխանցվել են այնպիսի կերպարներ, ինչպիսիք են «մահաշունչ վիշապ»¹, «նեռի կարապետ, անողորմ բռնավոր»² Լենկ Թեմուրն ու «վիշապն անդնդային»³ Շահ Աբասը, Ալեքսանդր Մակեդոնացին և Սողոմոն Իմաստունը, որոնք արևելյան բանահյուսական ավանդությունից գրավոր (Աստվածաշունչ և Կեղծ Կալիսթենեսի «Ալեքսանդրի պատմություն») և բանավոր ճանապարհով ներթափանցել են Հայաստան:

Նկատի ունենալով արևելյան պատմավիպական կերպարների բնույթի, գործառույթների, թողած ազդեցությունների, ընկալման ու գնահատման տարբերությունները` նախընտրելի է յուրաքանչյուր կերպար ներկայացնել առանձին` հետազոտելով սոցիալական, պատմական, ազգային այն իրական միջավայրը, որով պայմանավորված է մարդ-անհատի և պատմական անձի ձևավորման գործընթացը: Սյունիքի բանահյուսական ժառանգության մեջ արևելյան պատմավիպական կերպարների գոյությունը հետևանք է ժամանակագրորեն հեռավոր միջազգային փոխհարաբերությունների, քաղաքական, մշակու-

1 **Մեծփեցի Թովմա**, Պատմագրական երկեր, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2003, էջ 29:

2 Նույն տեղում, էջ 31:

3 **Դավիթեցի Առաքել**, Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցոյ, Վաղարշապատ, 1884, էջ 16:

թային ու տնտեսական կապերի, բանահյուսական նախաստեղծ սյուժեների ու մոտիվների փոխանցումների: Արևելյան պատմավիպական կերպարները պարարտ հող են գտել հայ բանահյուսական ավանդության մեջ, ձեռք են բերել համապատասխան լսարան, սերտաճել հայկական նյութին, իրենց սյուժեների մեջ ընդունել հայ սովորույթների, հավատալիքների, ծեսերի տարրեր և կերպարանափոխվել, համապատասխանեցվել հայկական միջավայրի պահանջներին: Այս ամենին պետք է հավելել նաև նվաճողական հարձակումների, պատերազմների, հայառջնացման ծրագրերի, բռնագաղթերի ողջ պատմությունը՝ ներառյալ Լենկ-Թեմուրի և Շահ Աբասի կիրառած դաժանություններն ու հայատյաց քաղաքականությունը:

Վերոհիշյալ պատմավիպական կերպարներն արևելյան բանահյուսական ժառանգության մեջ լայն տարածում են ունեցել, և հատկապես մերձավորարևելյան տարածաշրջանի բազմազգ ժողովուրդները դարեդար պատմել և փոխանցել են միմյանց: Հայ բանահյուսական ժառանգության մեջ պատմավիպական կերպարները հիմնականում հանդիպում են ավանդությունների, գրույցների, իրապատում հեքիաթների, զվարճախոսությունների մեջ:

Հրեաստանի նշանավոր թագավոր՝ Դավիթ թագավորի որդի Սողոմոն (մ.թ.ա. 950 թ.) իր մեծագործությունների շնորհիվ մեծ ճանաչում է ունեցել և հայտնվել է վիպական պատումների առանցքում: Նրա վիպական կերպարի զարգացմանը և տարածմանը նպաստել է նաև Աստվածաշունչը: Վաստակել է Իմաստուն պատվանունը, որը բազում դարեր ուղեկցում է նրա անվանը: «Ըստ Աստվածաշնչի՝ Սողոմոնը, ժառանգելով իր հոր՝ Դավիթի գահը, ողջակեզ է մատուցում աստծուն (Եհովային) և խնդրում իմաստություն՝ ժողովրդին դատելու և բարին ու չարը ճիշտ որոշելու համար¹: Եվ քանի որ նա չի խնդրում ո՛չ երկարակեցություն, ո՛չ հարստություն և ո՛չ էլ թշնամիներին ոչնչացնելու կարողություն, աստված նրան շնորհում է ոչ միայն իմաստություն, այլև՝ այն ամենը, ինչ նա չի խնդրել»²: Հիրավի, Սողոմոնի թագավորության տարիները խաղաղության, շրջակա երկրների հետ ցամաքային և ծովային առևտրի զարգացման, տաճարաշինության և բարգավճման տարիներ էին: Աստվածաշունչը վկայում է, որ Սողոմոնը զբաղվել է կենդանիների, թռչունների, սողունների ուսումնասիրությամբ, գրել է երգեր (Երգ երգոց)³ և առակներ (Գիրք առակաց)⁴, որոնք մտել են Աստվածաշնչի մեջ:

Դավիթի (մ.թ.ա. XI-X դդ) և Սողոմոնի (մ.թ.ա. 950-928 թթ) թագավորության տարիները համարվում էին հին հրեական թագավորության «Ոսկեդարը»⁵: Նպաստավոր ժամանակաշրջանը մեծ դեր է խաղացել նաև բանարվեստի նախնական տեսակների զարգացման համար: Հին հրեական երգերը, առածասացվածքները, առակները, հանելուկները ոչ միայն շրջանառվում էին բանավոր ճանապարհով, այլև առանձին անհատների կողմից օգտագործվում

1 Աստվածաշունչ, Գիրք Հին և Նոր կտակարաններու, Մոսկվա, տպ. «Zeus» «Major» ltd. 1994, էջ 428, 429, Գ թագ.: 2,3:

2 **Խենյան Է.**, Արևելքի պատմավիպական կերպարները Տավուշի բանահյուսության մեջ.- Ոսկե դիվան, հեքիաթագիտական հանդես, պրակ 3, Երևան, 2011, էջ 26:

3 Աստվածաշունչ, էջ, 856-863:

4 Նույն տեղում, էջ 803-842:

5 **Аверинцев С.С.**, Древнееврейская литература // История всемирной литературы, том I, Москва, изд-во «Наука», 1983, с. 271-300.

Էին որպես ատաղձ գրական ստեղծագործությունների համար: Սողոմոնին վերագրվող առակները ստեղծվել են ոչ միայն հրեական, այլև մերձավորարևելյան ժողովուրդների (շումերներ, ասորիներ, քաղդեացիներ, փյունիկեցիներ, եգիպտացիներ) բանահյուսական ժառանգության վրա: Որպես թագավոր, իմաստուն, ստեղծագործող (կարելի է ասել նաև՝ գիտնական)՝ Սողոմոնի փառքը տարածվել էր ողջ մերձավորարևելյան, եգիպտական, աֆրիկյան տարածաշրջաններում, նրա առասպելական կերպարը հեշտությամբ թափանցել է իր ժամանակաշրջանի բազմաբնույթ բանավոր պատումների մեջ: Հետագա դարերում այս գործընթացի զարգացման ու տարածման համար ազդակ է եղել Աստվածաշունչը:

Սողոմոնյան սյուժեները Հայաստան ներթափանցել են երկու ճանապարհով՝ բանավոր ու գրավոր: Հրեաների գանգվածային գերեվարումն ու բնակեցումը Հայաստանում Տիգրան Բ-ի օրոք¹ և Աստվածաշնչի թարգմանությունը զարկ տվեցին ոչ միայն փոխառյալ սյուժեների շրջանառմանը, այլև դրանց հիման վրա և դրանց նմանողությամբ ի հայտ եկան նորանոր սյուժեներ, որոնք համահունչ էին հայկական ավանդական նյութին ու պահանջված էին հայ բանասացի և ունկնդրի կողմից:

Ըստ հետազոտության՝ Սյունիքի տարածաշրջանի ազգաբնակչությունը միատարր չի եղել. Սիսիանի շրջանի մի շարք գյուղերի բնակիչներ 1828-29 թթ. գաղթել են Պարսկաստանի Մարաղա, Խոյ, Սալմաստ և այլ բնակավայրերից², խորհրդային տարիներին նույնպես Սյունիքի բնակչությունը համալրվել է պարսկահայերով (ղարադաղցիների ներգաղթը 1946 թ.)³, հետևաբար նրանք բերել են նաև իրենց հոգևոր-բանավոր մշակույթը, որը գումարվել է տեղական բանահյուսական ժառանգությանը: Ուստի գրառված նյութերը ներկայացնում են տեղացիների ու եկվորների բանահյուսական ժառանգության համաձուլվածք:

Սյունիքի տարածաշրջանից գրառված սողոմոնյան սյուժեները սահմանափակվում են Սողոմոնի իմաստուն դատավարության և որոշումների, կանանց անհավատարմության ու անիմաստ պահանջների նկատմամբ վերաբերմունքի և չարահալած կախարդանքի մոտիվներով:

Սողոմոնյան իմաստունությունը հատկապես դրսևորվում է իր հպատակների դատերը վարելու ընթացքում կայացրած արդարադատ ու իմաստուն որոշումներով: Նրան դիմում են թե՛ հանցագործությունն ու հանցագործին պարզելու և թե՛ կնճռոտ վեճերը ճիշտ ընթացքի մեջ դնելու անհրաժեշտության դեպքում:

Սողոմոնյան արխաիկ սյուժեներից մեկը երկու տագերականաց վեճի առարկա երեխայի իսկական մորը որոշելու համար (ATU 926 տիպ)⁴ Սողոմոնն առաջարկում է երեխային մեջտեղից կիսել: Իսկական մայրը հրաժարվում է երեխային կիսելու առաջարկից՝ հօգուտ հակառակորդի, միայն թե պահպանի

¹ **Փավստոս Բուզանդ**, Հայոց պատմություն, թարգմ. և ծանոթագր. Ստ. Մալխասյանցի, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1987, Դ, ԾԵ, էջ 267, Սարգսյան Գ.Խ., Հայկական աշխարհակալ տերությունը. Տիգրան Բ.- Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1971, էջ 570:

² Նույն տեղում, էջ 31:

³ Նույն տեղում, էջ 803-842:

⁴ **Uther H-J.**, The Types of International Folktales, A Classification and Bibliography, Based on the System of Antti Aarne and Stith Thompson, Part I, Helsinki, 2011, էջ 559.

որդու կյանքը¹. «Մեռած խուլխին մերը դայիլ ա կենում, համա սաղ խուլխին մերը՝ չէ: Նա ասում ա.- ես օգում չեմ, վեր կես անես, խոխան տուր ուրան, թափի վեր սաղ մնա:

Սողոմոն Իմաստունն ասում ա.- Դե ալ վիճիլը հարկավեր չի, խուլխին մերը տուր ես, եր կալ քյնա»²:

Այս հանրահայտ սյուժեն «Սողոմոն դժվար հարց մը կը լուծե» վերտառվածքային մտել է Աստվածաշունչ, որպես սողոմոնյան իմաստության հավաստում և հաստատում: Սողոմոնը, աստծուց իմաստություն խնդրելով և այն ստանալով, անմիջապես այդ հարցը լուծում է և ամրապնդում իր իմաստուն լինելու և վճիռ կայացնելու իրավունքը. «Բոլոր Իսրայել թագաւորին կտրած դատաստանը լսելով՝ թագաւորէն վախցան, քանզի տեսան թէ անոր վրայ Աստծոյ իմաստութիւնը կայ դատաստան ընելու համար»³: Սյուժեն մեծ տարածում է գտել քրիստոնյա և մահմեդական ժողովուրդների շրջանում և բազմաթիվ տարբերակներով գրեթե առանց փոփոխության պատմվել⁴: Պետք է նկատել, որ սողոմոնյան հարյուրավոր սյուժեներից սա միակն է, որ առկա է Աստվածաշնչում:

Մահմեդական բանահյուսական ավանդույթում Սողոմոնը հանդես է գալիս Դաուդի որդի Սուլեյման անունով: Ինչպես Աստվածաշնչում, այնպես էլ մուսուլմանական Սուրբ գրքում՝ Ղուրանում Սուլեյմանը ներկայացվել է ոչ միայն որպես իմաստուն, այլև հրաշագործություններին և կախարդանքի միջոցներին տիրապետող⁵:

Սողոմոն իմաստունի կերպարանափոխման, կենդանիների ու թռչունների լեզուն հասկանալու, մարդկանց մտքերը կարդալու ունակություններն ընկած են սողոմոնյան սյուժեների հիմքում և օգնում են նրան զարգացնելու իր հարաբերություններն իրեն շրջապատողների, մերձավորների ու հպատակների հետ, մեկնաբանելու, բացահայտելու, լուծելու դժվարամարս խնդիրները, շտկելու խաթարված հարաբերությունները, իմաստուն խորհուրդներով ուղղորդելու մարդկանց գործողությունները:

Աստվածաշունչը տեղեկացնում է, որ Սողոմոնը «... Փարավոնին աղջկան համար ալ, որ իրեն կին առեր էր, այս սրահին պես տուն մը շինեց...»⁶: Այդ փաստի հիման վրա ստեղծվել են բազմաթիվ բանահյուսական սյուժեներ, որոնց շարքում իր ամբողջականությամբ, գործողությունների պատճառաբանվածությամբ, ստուգաբանական եզրակացություններով առանձնանում է Ղափանի ավանդազրույցը⁷ (ըստ արևելասլավոնական հեքիաթային համացույ-

1 «Արթարադատ Սողոմոնը».- ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ (այսուհետև՝ ՀԱԻԲԱ) FFVIII:7470,01-7471,00, բանահավաք Արամ Մարգարյան:

2 Նույն տեղում:

3 Աստվածաշունչ, Նույն տեղում, Գ թագավորաց, 4,5, էջ 431-432:

4 «Сказание о мудром царе Соломоне».- Фольклор Азербайджана и прилегающих стран, том III, Баку, Изд-во АЗГНИИ, 1930, с. 29-30.

5 **Пиотровский М.Б.**, Сулейман, // Мифы народов мира (այսուհետև՝ МНМ), Москва, Изд-во «Советская энциклопедия», 1988, т. II., с. 475, **Щедровицкий Д.Б.**, Соломон, там же, с. 460-461, Коран, Перевод и комментарии Крачковского И.Ю., Москва, Изд-во «Наука», 1986, с. 271, 21:78:79:

6 Աստվածաշունչ, Նույն տեղում, Գ թագավորաց, 6,7, էջ 434:

7 ԱՀ, գիրք XIX, Թիֆլիս, 1910, էջ 92-94, **Ղանալանյան Ա.**, Ավանդապատում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969, № 794, էջ 344-346:

ցի՝ CYC-BCC, 983* տիպ)¹: Ավանդագրույցը մասամբ է համընկնում վերոհիշյալ տիպին և զգալիորեն տարբերվում է մյուս նմանատիպ սյուժեներից: Պատումը մի քանի մոտիվների համադրությամբ հետևյալ բովանդակությունն ունի. Սողոմոն Իմաստունը խնդրում է Փարավոն թագավորի աղջկա ձեռքը և մերժվում՝ պատճառաբանությամբ, որ չի կարող կռվել թագավորի հետ, որովհետև համապատասխան ուժ չունի: Սողոմոնը կռվի պատրաստվելու համար 7 օր է խնդրում: Այդ ընթացքում իր հմայական զորությունների շնորհիվ նա հրամայում է մրջյունների, մկների, բզեզների թագավորներին դատարկել Փարավոնի ամբարները, որ նրա զորքն ու ժողովուրդը քաղցած մնան, հրամայում է ծովային ամպերին բռնել երկնքի երեսը և քամուն արգելում է փչել, իսկ մոծակների թագավորին՝ իր հպատակներով թանձր մշուշի տակ հարձակվել փարավոնի զորքի վրա: Կծուված, կուրացած զորքի փրկված գինվորը լուր է տանում Փարավոնին. «... որ մուք մինմինու կըտրալ ըք, համա ուրան դոշունեն ոչ մընին քեթը ըրնալ չի»: Թագավորը համաձայնվում է իր աղջկան ամուսնացնել Սողոմոնի հետ: Պատումում ընդգծված են Սողոմոնի հրաշագործությունները, նա կառավարում է բնության ուժերը, կենդանիներին ու թռչուններին, ինչը ենթադրել է տալիս Սողոմոնի դիցաբանական ծագման մասին: Սակայն ըստ ավանդագրույցի՝ Սողոմոնը մեծ քարոզիչ է և շրջագայելով աստծու խոսքն է տարածում, իսկ Փարավոնի աղջիկը կռապաշտ է և միայնակ մնում է տանը: Նա պահանջում է իր համար կառուցել թռչունների փետուրներով այնպիսի տուն, «... որ թռչունը եշիմ ըրիա (որ կողմը նայեմ՝ երևա)»: Թռչունների թագավորն ավելի իմաստություն է դրսևորում, քան Սողոմոնը և առաջարկում է. «... տու խե՞ ըս էսքան հեյվանու մեղք ընգնում, հինչն ա բու, ծովեն դրադեն դամիշը, ոչխարեն էլ պուրթը: Պիրում ա հետո դամիշա չաթան շինիլ տալիս, պրթա ալ քիչա, օբա շինում, քցում երան, թա՞ թռչուն օգում ըս, եշի՞ ըրիա:

Քեչաչաթանը էդ օրաց ա ադաթ ընգած»²:

Սակայն դա էլ չի բավարարում փարավոնի աղջկան. Սողոմոնը մի սնդուկ է պատվիրում և դնում սենյակի անկյունում որպես կուռք, որ կինը երկրպագի: Բայց կինը պահանջում է, որ ամուսինը երկրպագի իր կուռքերին: Սողոմոնը կնոջ բարկությունը մեղմելու համար խոստանում է ձի նստելիս մտրակը օգել և վերցնելիս երեսը դեպի կուռքերը դարձնել. «... գիդաց, որ քու կուռքեդ ըմ երկրպագություն տալիս»: Բայց օտար կուռքերի առաջ խոնարհվելը Սողոմոնի համար ճակատագրական է լինում. «... բիրդան հոգավ-մարմնավ կորչում ա: Մհենգ էս սիաթս ալ Սուղումուն Իմաստունեն տեղը մահիում չի, գիտացվալ չի՝ քամի ա տեռալ, հինչ ա տեռալ...»:

Սույն ավանդագրույցը երկու կարևոր եզրահանգում ունի. ա) Սողոմոնի անվան հետ է կապում և ստուգաբանում հին աշխարհում տարածված և մինչև օրս խաշնարածների ու սարվորների կենցաղում կիրառվող թաղիքապատ ծածկոցով և եղեգնյա պատերով վրանի կառուցման դրդապատճառն ու ենթադրյալ ժամանակը: բ) Սեփական աստծուն թեկուզ կեղծ ուրանալով՝ Սողոմոնը հատուցում է: Նա անեանում է և հոգով-մարմնով կորչում: Այստեղ մենք

¹ Сравнительный указатель сюжетов, Восточнославянская сказка, Ленинград, Изд-во «Наука», 1979, с. 252.
² **Ղանալանյան Ա.**, էջ 345:

գործ ունենք կռապաշտության դեմ պայքարի մի դրվագի հետ, որն ուսուցանում է, թե ճշմարիտ հավատից շեղումը ինչ հետևանք կարող է ունենալ:

Այս պատումի՝ այլ տարածաշրջաններից գրառված սյուժեներում (տպագիր և արխիվային 14 տարբերակ)³ մասնավորեցվում է Սողոմոնի կնոջ մտադրությունը՝ ամուսնուն խաբելու, իր կամքը թելադրելու և նրա վրա իշխելու ցանկությամբ առաջնորդված գործողությունները (հիվանդ ձևանալ, հանգիստ քնել, տիրությունը փարատել, կուռքերին երկրպագել և այլն): Կնոջից խաբված Սողոմոնի անհեռատես վարքագիծն իմաստուն բուհի կողմից որակվում է որպես կանացիություն. «Տղամարթը շատ չէ, կնիկմարթը շատ է, դուն էլ կնիկմարթ ես, կնկադ բերնով ես դու փետե»⁴:

Դիտարկելով սողոմոնյան սյուժեներում Սողոմոնի կապը քամու հետ՝ պետք է ընդունենք, որ նմանօրինակ մոտիվները խիստ արխաիկ են: Ըստ փյունիկյան առասպելաբանական ավանդույթի՝ քամին աշխարհստեղծման կարևոր տարրերից է⁵: Մարդը բնության ուժերն իր կամքին ենթարկելու համար դիմել է կախարդանքի, մոգության ու նզովքների⁶: Քննված պատումներում Սողոմոնը բացահայտ իշխող դիրք ունի կենդանիների, թռչունների, բնության ուժերի նկատմամբ, չի բացառվում, որ նրա կերպարում խտացել է սեմական, վաղմիջագետքյան, հրեական հնագույն աստվածություններից մեկի գործառույթները:⁷ Գոյություն ունի մի երկրորդ հանգամանք ևս. կռապաշտությունը մերժող Սողոմոնի գործողություններից շատերի հիմքում ընկած են կախարդանքի և մոգության դրսևորումները, որոնք կապ չունեն Սողոմոնի աստծու հետ և բացահայտ մատնացույց են անում բանահյուսական այն հնագույն շերտը, որի վրա խարսխվել են նոր ժամանակների (նկատի ունենք Սողոմոնի ապրած ժամանակաշրջանը) պատումները: Հետևաբար, Սողոմոնի վարքագծում ի հայտ է գալիս հնագույն կրոնահավատալիքային տարրերի կիրառման արմատացած սովորույթը:

3 **Ղանալանյան Ա.**, էջ 342-344, ՀԱԻԲԱ FIV: 0731,01-0742,00, բանահավաք՝ Ա. Կարապետյան, Շամշադին-Այգեծոր, «Կնկաց խաբուկ».- Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. X, կազմեց Տարոնցի Ս., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967, էջ 341, № 120, «Սողոմոն հմաստունն ու Սայի դուշը».- **Խեմչյան Է.**, Տավուշ, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 21, Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 2000, էջ 131, № 35(35):

4 ՀԱԻԲԱ FIV: 4175,01-4176,00, բանահավաք՝ **Գր. Կարախանյան**: Ախալքալաք, գյուղ Դիլիսկա:

5 **Шифман И.Ш.**, Западноевропейская мифология,- МНМ, Москва, Изд-во «Советская энциклопедия», 1987, т. I, с. 459.

6 **Ֆրեզեր Ջ.**, Ոսկե ճյուղը, Մոգության և կրոնի ուսումնասիրություն, Երևան, «Հայաստան», 1989, էջ 69:

7 Այս մոտիվն առկա է նաև կովկասյան բանահյուսական ավանդույթում, որը հաստատում է աստծո, նրա կնոջ և նրան ենթակա կենդանական աշխարհի փոխհարաբերությունները: Ըստ արխագական ավանդագրույցի՝ որսորդության և վայրի կենդանիների ու թռչունների աստված Աժվեյշպայի (**Очиаури Г.А., Сургуладзе И.К.**, «Кавказско-иберийских народов мифология».- МНМ, т. I, с. 604.) կինը համառորեն պահանջում է, որ նա իրեն ենթակա թռչունների ու գազանների ոսկորներից տուն կառուցի: Աժվեյշպայն բոլորին կանչում է, սակայն բուն չի ներկայանում: Երկար սպասումներից հետո բուն գալիս է և բացատրում ուշացման պատճառը. այն է՝ հաշվել է, թե քանի ողջ և քանի մեռած մարդ կա: Աստծո հարցին՝ մեռածներն են շա՞տ, թե՞ ողջերը, բուն պատասխանում է, որ մեռածներն ու ողջերը հավասար են, բայց մեռածների թվին ավելացրել է այն մարդուն, ով լսում է իր կնոջը: Աժվեյշպայն հասկանում է իր սխալը և բոլորին ազատ արձակում, իսկ բվին՝ ուտելու համար հատկացնում է օրը մեկ թռչուն, որն ուտվելուց հետո դրախտ կընկնի: Դրա համար թռչունները երբ տեսնում են բվին, հարձակվում են վրան, ասելով՝ «կեր ինձ»՝ հուսալով, որ դրախտ կընկնեն (Абхазские сказки, с предисловием А. Хашба, Сухум, Издание АБЖИИКа, 1935, с. 101,102):

Այդպիսի պատումներից մեկը¹ ներկայացնում է Սողոմոնի պայքարը սատանաների դեմ: Սողոմոնը կրկին դիմում է կախարդանքի ուժին, հիպնոսում է սատանաներին, դարձնում է փոշու հատիկի չափ, լցնում յոթ կժերի մեջ, բերանները զմռսում և գցում աշխարհի ամենախոր ծովը: Տարիներ անց ձկնորսները կժերից մեկը դուրս են քաշում, բացում, փոշեհատիկները դուրս են գալիս և անհետանում. «Մինգ աշխարքեն երե հատուկենդ սուտանաներ որ ըրվալիս, Էն կուժեն մաչեն նանե դուս ըկողնընս, Էն վեց կոժրը դեչանը ասոր ալ մնալիս են ծովեն տակեն»²:

Սողոմոնյան այս մոտիվի տարբերակը հանդիպում է արաբական «Հազար ու մեկ գիշեր» հեքիաթապատում ժողովածուի «Ձկնորսի հեքիաթը» պատումի մեջ: Սուլեյմանը ճշմարիտ հավատ չընդունող անհնազանդ ջիներին արգելափակում է պղնձե սափորների մեջ, կնքում իր մատանիով, որի վրա Աստծու ամենամեծ անունն է փորագրված և նետում ծովը³:

Ըստ ժողովրդական հավատալիքների՝ սատանաները չար ուժերի մարմնավորումն են, և բոլոր դժբախտությունները, հիվանդությունները, ավերածությունները, վախերը նրանց գործունեության հետևանքներն են: Սողոմոն Իմաստունի դիվահալած գործողությունը մասնակի բնույթ չի կրում, նրա նպատակը ողջ սատանաներին մեկուսացնելն ու արգելափակելն է, որը նա կախարդանքի հնարներին տիրապետելու միջոցով հաջողությամբ իրագործում է: Բայց շրջակա միջավայրում չար ուժերը շարունակում են ծավալել իրենց գործունեությունը, հետևաբար ժողովրդական պատումը յուրովի մեկնաբանում է նրանց գոյության փաստը՝ այն վերագրելով ձկնորսների հանած մեկ կժի պարունակության սփռմամբ աշխարհով մեկ: Սողոմոնի արմատական չարահալած գործողությունը խաթարվում է, սակայն դրանից նրա առասպելական կերպարը չի տուժում:

Ժողովրդական գրույցներում ինքնատիպ զարգացում ունի Սողոմոնի անհավատարիմ կանանց թեման: Ըստ այդ պատումների՝ Սողոմոն Իմաստունը 40 անգամ ամուսնացել և բաժանվել է, որովհետև կանայք անհավատարիմ և անբարո վարք են ունեցել: Ճարահատ Սողոմոնը որբանոցից մի տասնամյա աղջիկ է վերցնում ու մի պառավի հանձնարարում նրան մեծացնել մինչև ամուսնության հասակը: Սակայն պարզվում է, որ արտաքին աշխարհի հետ կապ չունեցող աղջիկը հղիացել է, և Սողոմոնը եզրակացրել է, որ «... աշխարքեն օմեն կնանեքն ալ մին ըն», սակայն մայրը փորձել է համոզել, որ բոլոր կանայք մեկ չեն⁴: Դառնացած Սողոմոնը հեռանում է տնից: Հաջորդ տարբերակը լրացնում է առաջինին: Նա մի քանի տարի կերպարանափոխված շրջում է աշխարհով մեկ՝ իրեն տանջող հարցի պատասխանը ստանալու համար և վերադառնում է չարչու կերպարանքով ու իր հետ բերում մի զարմանահրաշ առարկա՝ հայելի, որի գոյությանը մարդիկ առաջին անգամ են ծանոթանում: Սողոմոնի մայրը գնում է հայելին տեսնելու և հարցնում է գինը (նա որդուն չի ճանաչում): Սողոմոնը պայման է դնում հայելին տալ նրան, ով իր հետ գիշերն

1 ՀԱԻԲԱ, Հ. Հովսեփյանի ֆոնդ, «Ղարադաղի հայերի հոգևոր գանձարանի գոհարները», VI գիրք (ձեռագիր), էջ 82, գրառվել է Սյունիքում՝ հայրենադարձ պարսկահայից:

2 Նույն տեղում:

3 Халиф на час, избранные сказки, рассказы и повести из «Тысячи и одной ночи», Москва, изд-во «Правда», 1986, с. 60-66.

4 ՀԱԻԲԱ, Հ. Հովսեփյանի ֆոնդ, էջ 78-79:

անկողին կմտնի: Սողոմոնի մայրը շատ է փորձում գնել հայելին, բայց ապարդյուն: Ի վերջո, նա համաձայնվում է չարչու պայմանին: Հիասթափված Սողոմոնն ասում է. «Մի հիլիլավ խափված կնեգ, ախր իս քու տղան ըմ՝ Սողոմոն Իմաստունը»¹: Հեքիաթային այս տիպը (ATU 920A* և CYC-BBC 920*), ինչպես նաև ներկայացված նախորդ սյուժեն, միտված են կնոջ հավատարմությունը փորձության ենթարկելու և ճշմարտությունը վեր հանելու խնդրին: Կանայք առանձնացված չեն, քննության ենթակա են բոլորը, ընդհուպ՝ Սողոմոնի մայրը: Միամտություն կլինի կարծել, որ Սողոմոնի ժամանակներում հայելի չկար և հայելին զարմանահրաշ առարկա էր: Պարզապես սա նույնպես արխաիկ սյուժե է, որ վերագրվել է Սողոմոնին, որը իմաստուն է և կախարհ, հետևաբար կարող է մեկնաբանել կանացի եռության դրսևորումները՝ օգտագործելով նաև հայելին: Ըստ հավատալիքների՝ հայելու և ջրի մեջ արտացոլվում է մարդու հոգին², հետևաբար հայելու միջոցով երկու խնդիր է լուծվում. ա) այն ծառայում է որպես գայթակղության միջոց, բ) արտացոլանքը մատնում է կնոջ իրական եղությունը:

Սյունիքի տարածաշրջանում կենցաղավարող և գրառված սողոմոնյան բանահյուսական սյուժեներն, ի տարբերություն համահայկական նյութի, սահմանափակ մոտիվներ են ներկայացնում: Սա չի նշանակում, որ Սյունիքում այս պատմավիպական կերպարի մասին քիչ է պատմվել, պարզապես XIX-XX դդ. բանահավաքները հնարավորություն չեն ունեցել բանահավաքչական լայնածավալ գործունեություն ծավալելու: Ձեռքի տակ եղած նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սողոմոնյան սյուժեներն ունեն բարոյախրատական, ճանաչողական, ստուգաբանական գործառույթներ:

Պատմական Սողոմոն թագավորը բանահյուսական սյուժեներում վերածել և ձեռք է բերել պատմավիպական հերոսի հատկանիշներ: Բանահյուսական սյուժեների և վիպական կերպարի ձևավորման մեջ առկա են առասպելական, բնապաշտական տարրերի, նախաստեղծ ավանդական մոտիվների հարակցումներ: Սողոմոնյան սյուժեները, գրավոր և բանավոր ճանապարհով ներթափանցելով Հայաստան, սերտաճել են ավանդական հայկական նյութի, ձեռք բերել տեղական լսարանի պահանջները բավարարող տարրեր և, մասամբ, հայկականացվել:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ազգագրական հանդես, գիրք III, Թիֆլիս, 1898:
2. Ազգագրական հանդես, գիրք XIX, Թիֆլիս, 1910,;
3. **Դավրիժեցի Առաքել**, Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ, Վաղարշապատ, 1884:
4. Աստվածաշունչ, Գիրք Հին եւ Նոր կտակարաններու, Մոսկվա, տպ. «Zeus» «Major» ltd. 1994:
5. **Մեծփեցի Թովմա**, Պատմագրական երկեր, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2003:

¹ Նույն տեղում, էջ 80-81: Գրառվել է Սյունիքում 1985 թ.:

² **Ֆրեզեր Զ.**, էջ 231:

6. Խեմչյան Է., Տավուշ, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 21, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000:

7. Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. X, կազմեց Տարոնցի Ս., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967:

8. Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1971:

9. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ:

10. Հովսեփյան Հ., Ղարադաղի հայերը, հ. II, Բանահյուսություն, կազմողներ՝ Վարդանյան Ս.Ա. Խեմչյան Է.Հ., Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009:

11. Ղանալանյան Ա., Ավանդապատում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969:

12. Ոսկե դիվան, հեքիաթագիտական հանդես, պրակ 3, Երևան, 2011:

13. Փավստոս Բուզանդ. Հայոց պատմություն, թարգմ. և ծանոթագր. Ստ. Մալխասյանցի, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1987:

14. Ֆրեդեր Զ., Ոսկե ճյուղը, Մոզոլթյան և կրոնի ուսումնասիրություն, Երևան, «Հայաստան», 1989:

15. Абхазские сказки, с предисловием А. Хашба, Сухум, Издание АБЖИИКа, 1935.

16. История всемирной литературы, том I, Москва, изд-во «Наука», 1983.

17. Коран, Перевод и комментарии Крачковского И.Ю., Москва, Изд-во «Наука», 1986.

18. Мифы народов мира, Москва, Изд-во «Советская энциклопедия», 1987, т. I.

19. Мифы народов мира, Москва, Изд-во «Советская энциклопедия», 1988, т. II.

20. Сравнительный указатель сюжетов, Восточнославянская сказка, Ленинград, Изд-во «Наука», 1979.

21. Фольклор Азербайджана и прилегающих стран, том III, Баку, Изд-во АЗГНИИ, 1930.

22. Uther H-J., The Types of International Folktales, A Classification and Bibliography, Based on the System of Antti Aarne and Stith Thompson, Part I, Helsinki, 2011.

ХЕМЧЯН ЭСТЕР - СОЛОМОНОВСКИЕ СЮЖЕТЫ В ФОЛЬКЛОРНОМ НАСЛЕДИИ СЮНИКА - Частью эпического фольклора Сюника является ряд историко-эпических образов, заимствованных у восточной фольклорной традиции. Из них фольклорные сюжеты об общеизвестном библейском герое Соломоне Премудром как письменным (Библия), так и устным путём вошли в устную армянскую традицию.

Соломоновские сюжеты, записанные в сюникском регионе, ограничиваются мотивами мудрого судопроизводства и решений Соломона (тип АТУ 926), в отношении женской неверности (типы АТУ 920А* и СУС-ВВС 920*) и бессмысленных требований (тип СУС-ВВС 983*), также колдовства, изгоняющее зло. Исследование упомянутых мотивов показывает, что Соломон Премудрый способностями преображаться, понимать язык животных и птиц, заставляя служить себе силам природы, осуществлять мудрые судебные решения, умеет решать трудные задачи, уладить разрушенные отношения, направлять действия людей. Вышеупомянутые свойства выявляют взаимосвязь образа Соломона с мифологическими представлениями. Соломоновским сюжетам характерны также затемневшее наличие первозданных мотивов.

Ключевые слова: фольклор, историко-эпический образ, архаичный сюжет, предание, Соломон Премудрый, Библия, колдовство, чудотворство, верование.

ESTER KHEMCHYAN - SOLOMON STORIES IN THE FOLKLOR HERITAGE OF SYUNIK REGION - A series of historical epic images borrowed from the eastern folklore tradition is a part of the epic folklore of Syunik. Of these folklore stories about the well-known biblical hero Solomon the Wise has entered into the oral Armenian tradition in written (the Bible), or the oral way.

The Solomon stories recorded in the Syunik region are limited to the motives of wise judgments and decisions by Solomon (type ATU 926), with regard to female infidelity (types ATU 920A * and SUS-VVS 920 *) and meaningless requirements (type of SS-BBC 983 *), as well as the witchcraft that casts out evil. The study of these stories shows that Solomon the Wise by his abilities of transforming himself, understanding the language of animals and birds, forcing the forces of nature to serve him, is able to implement wise judicial decisions, knows how to solve difficult tasks, resolves disrupted relationships, directs people's actions. The above-mentioned properties reveal the relationship between the image of Solomon and mythological representations. Solomon's themes are also characterized by the darkened presence of original motifs.

Keywords: folklore, historical-epic character, archaic storie, legend, Solomom the Wise, Bible, spell, magic, belief.